ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍԱՖԱՐԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Յարգարժան պրն. Սաֆարեան,

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք Ռուսաստանի հայոց կեանքում Ձեր բեղմնաւոր գործունէութեան մասին: Ուրախ ենք մեծապէս, որ Ձեր սրտաբուխ ընծայաբերումներով Դուք երկար տարիներ կարեւոր աւանդ էք բերում ռուսահայոց Տիրախնամ թեմում ազգային եւ հոգեւոր կեանքի շինութեանն ու պայծառութեանը:

Յատկապէս գնահատարժան է հաւատաւոր հայորդու շարունակական օժանդակութիւնը թեմի Հայորդեաց Տան գործունէութեանը, որի լուսաւոր յարկի ներքոյ հայ երիտասարդ սերունդը հնարաւորութիւն ունի սովորելու մայրենի լեզուն, ծանօթանալու մեր ժողովրդի եւ Եկեղեցու պատմութեանը, հաղորդ դառնալու մեր հայրերի աւանդներին ու սպեղծած արժէքներին: Ձեր եւ եկեղեցանուէր հայորդեաց աջակցութեան շնորհիւ կրթօջախը տարիներ շարունակ հայեցի սերունդ է կրթում ու դաստիարակում՝ նրանց մէջ զօրացնելով ազգային ինքնութեան գիտակցութիւնը:

Ձեր անկեղծ եկեղեցասիրութիւնն ու ազգասիրութիւնը Դուք արտայայտեցիք նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը բերած մեծագումար ընծայաբերումով: Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Տիրոջ ամենառատ օրհնութեամբ եւ եկեղեցաշէն բարերարների յանձնառութիւնների շնորհիւ փառապես վեր է յառնել եկեղեցին եւ իր դռներն է բացել հաւատաւոր հայորդեաց առջեւ՝ դառնալով Մոսկուայի հայութեան ազգային ու հոգեւոր կեանքի կազմակերպման նուիրական կենտրոն:

Բարձր գնահատելով Ձեր բազմարդիւն վաստակը մեր ժողովրդի եւ Եկեղեցու կեանքում եւ սիրով ընդառաջ թեմակալ Առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ միշտ առողջ ու երջանիկ

պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Շնո՛րհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հաւրէ, եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հաւր, ճշմարտութեամբ եւ սիրով եղիցի ընդ ձեզ (Ա. Յովհ. Ա. 3):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 793